ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ /ծածկագիր՝ 3.2-1/:

1-ին կարգի մասնագետն աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է համայնքապետարանի դրամական միջոցների մուտքագրման, դուրս գրման, այդ թվում՝ աշխատավարձի վճարման գործառույթներ, իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների՝ շտեմարանի հետ կապված աշխատանքները:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ է ՝

ա) միջնակարգ կրթություն

բ) սույն պաշտոնի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իմացություն.

գ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

դ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու հայտարարված մրցույթը կկայանա 2018թ-ի հուլիսի 31-ին ժամը 11:00-ին, Շահումյանի համայնքապետարանի շենքում:

Դիմող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները համայնքապետարանի աշխատակազմ կամ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

-դիմում մրցութային հանձնաժողովի անունով(ձևը լրացվումէ փաստաթղթերը ներկայացնելիս).

-տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային

ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը՝ բնօրինակի հետ միասին.

-հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության 2011թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

-հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

-արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականների պատճենները.

-մեկ լուսանկար 3X4 սմ չափսի.

-անձնագրի պատճեն.

-սոցիալական քարտի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի համայնքապետարան (հասցեն՝ գ. Շահումյան, Լ.Նավասարդյան փող., թիվ 19/1) կամ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ վարչություն (հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան-71, հեռ.՝ /237/ 2-07-70, 2-76-49):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը՝ 10:00-16:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2018թվականի հուլիսի 16-ը: